ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի հունվարի 31-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ. Վաճառողի կողմից ստացված գրության հիման վրա՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ԼԵՈՆ» ՍՊԸ-ի միջև 08.10.2023թ-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն. ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ԼԵՈՆ» ՍՊԸ-ի միջև 08.10.2023թ-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի 1-ին չափաբաժնի մասով «Ժամկետը**» սյունակում նշված «Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 31.01.2024թ.-ը» բառերը փոխարինվել են «Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 01.03.2024թ.-ը» բառերով:

Փոփոխության հիմնավորում. Պայմանագրի 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ**